ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, Էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

Ք. Երևան 03 հունիսի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾԱԾԿԱԳԻՐ՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/06

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/06 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «ԷՅ ԷՄ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն / ՀՀ, Սարմենի փ. 1 ՀՎՀՀ՝ 08280063՝ Էլ. փոստ՝ production.am25@gmail.com, (այսուհետ՝ Մասնակից):

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «ԷՅ ԷՄ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.02.2025թ. կնքված «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/06-1» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերով նախատեսված ապրանքները: Ընկերությունը խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ամբողջությամբ չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով՝ միակողմանի /մասնակի/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի մայիսի 30-ին և Պայմանագիրը մայիսի 31–ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «ԷՅ ԷՄ ՓՐՈԴԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԵԳՈՅԱՆ